## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 37, 3, 9, 7, 38 և 17 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով թիվ 37, 3, 9, 7, 38 և 17 (ըստ սահմանադրական դատարան մուտքագրման հաջորդականության) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ընդունած որոշումների հետ կապված վեճերով պատգամավորության թեկնածուները ՀՀ սահմանադրական դատարան են դիմել օրենքով սահմանված ժամկետում, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 74-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Սամվել Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Պողոսյանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 5-ին, ժամը 10.00-ին:

**2.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Մանուել Գասպարյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Կ. Բալայանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 8-ին, ժամը 10.00-ին:

**3.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Լեւոն Զուրաբյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 12-ին, ժամը 10.00-ին:

**4.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնա-կան ընտրակարգով պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրու-թյան արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Մ. Թոփուզյանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 7 ընտրապատարածքային ընտրական հանձնաժողովին:

Սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 15-ին, ժամը 10.00-ին:

**5.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Դավիթ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 38 ընտրապատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 64 որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 38 ընտրապատարածքային ընտրական հանձնաժողովին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 19-րդ մասի հիմքով սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 19-ին, ժամը 10.00-ին:

**6.** 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Գագիկ Ներսիսյանի դիմումի հիման վրա՝ «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 17 ընտրապատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշման հետ կապված վեճով» գործն ընդունել քննության:

Սույն գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփած թիվ 17 ընտրապատարածքային ընտրական հանձնաժողովին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 19-րդ մասի հիմքով սույն գործով դատաքննությունն սկսել 2012 թվականի հունիսի 22-ին, ժամը 10.00-ին:

**7.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ քննության ընդունված գործերի դատաքննությունը կազմակերպել գրավոր ընթացակարգով:

**8.** Պահանջել պատասխանող կողմերից՝ համապատասխան գործով գրավոր բացատրությունը ներկայացնել գործի դատաքննությունից առնվազն 7 օր առաջ՝ այն դիմողին պրամադրելու եւ դրա առնչությամբ դիմողի նկատառումները նիսփից առնվազն երեք օր առաջ դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացնելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

21 մայիսի 2012 թվականի
ՍԴԱՈ -32